Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2024 թ. որոշմամբ
«ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01277
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2010-10-29
1.5 ՀՎՀՀ-ն		02710011
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55612751
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.cpeer.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@cpeer.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արմենակ Դարբինյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	3	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ներդրված ավանդների և բանկային հաշիվներում առկա մնացորդների դիմաց հաշվեգրված տոկոսներ	348,558,342

Signature Not Verified
Digitally signed by ZURABYAN LUSINE 6812760536
Date: 2024.06.26 11:20:53 AMT

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ՀՀ տնտեսության հետազոտություն, ուսումնասիրություն	36,571,000	
Տաղանդաշատ ուսանողների ուսումնառության կազմակերպում առաջատար ուսումնական հաստատություններում	4,244,750	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	136,349,724	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	40,815,750	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 4 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

Grant Thornton

նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

19 հունիսի 2024թ.

Հոգաբարձուների խորհրդի անդամներ

Ներսես Երիցյան

Խորհրդի նախագահ

Հասմիկ Ղահրամանյան

Խորհրդի անդամ

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ

Արմեն Նուրբեկյան

Խորհրդի անդամ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	217,011	52,196
Ճշգրտումներ՝	-	
Մաշվածություն	3,565	3,025
Ֆինանսական ակտիվների արժեզրկման հակադարձումից (օգուտ)/վնաս	2,645	(17,848)
Ֆինանսական եկամուտ	(348,556)	(325,483)
Ֆինանսական ծախս	950	1,134
Շահութահարկի գծով ծախս	62,095	61,541
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(62,290)	(225,435)
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(8,473)	6,262
Տրված կանխավճարների փոփոխություն	203	14,675
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(70,560)	(204,498)
Վճարված շահութահարկ	(62,031)	(55,534)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(132,591)	(260,032)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		746	1,008
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	4	8,680	8,354
Երկարաժամկետ ավանդներ առևտրային բանկերում	5	2,281,108	774,733
Հետաձգված հարկային ակտիվներ	12	6,365	5,720
		2,296,899	789,815
Ընթացիկ ակտիվներ			
Ավանդներ առևտրային բանկերում	5	1,385,376	2,682,303
Տրված կանխավճարներ		-	203
Մնացորդներ բանկերում		36,477	36,362
		1,421,853	2,718,868
Ընդամենը ակտիվներ		3,718,752	3,508,683

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	6	3,000,000	3,000,000
Վարձակալության գծով պարտավորություն	7	5,094	6,496
		3,005,094	3,006,496
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	8	747	9,220
Վարձակալության գծով պարտավորության	7	4,975	2,751
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		15,261	14,552
		20,983	26,523
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		692,675	475,664
		692,675	475,664
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		3,718,752	3,508,683

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 19-ին:

Արմենակ Դարբինյան
Տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամուտների և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական եկամուտ	9	348,556	325,483
Ակնկալվող կորուստների պահուստի ճշգրտման զծով (ծախս)/եկամուտ		(2,645)	17,848
		345,911	343,331
Ծրագրային ծախսեր	10	(40,816)	(202,369)
Հատուցումներ աշխատակիցներին		(17,491)	(19,166)
Այլ ծախսեր	11	(7,548)	(6,925)
Ֆինանսական ծախսեր		(950)	(1,134)
Շահույթ մինչև հարկերը		279,106	113,737
Շահութահարկի զծով ծախս	12	(62,095)	(61,541)
Տարվա արդյունք		217,011	52,196
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		217,011	52,196
Զուտ ակտիվները տարվա սկզբում		475,664	423,468
Զուտ ակտիվները տարվա վերջում		692,675	475,664

Եկամուտների և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամը (Հիմնադրամ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի N 1/1365Ա որոշման համաձայն՝ 2010թ. հոկտեմբերի 14-ին:

Հիմնադրամի հիմնադիրն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը կազմված է երեք անդամից: Խորհրդի անդամներին նշանակում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահը:

Հիմնադրամի հիմնադրման հիմնական նպատակն է աջակցել այլ երկրների տնտեսագետների հետ գիտական կապերի հաստատմանը, համագործակցության խորացմանը, ինչպես նաև այլ երկրներում միջազգային համաժողովներին մասնակցելուն և այդպիսի համաժողովներ Հայաստանի Հանրապետությունում անցկացնելուն, աջակցել տնտեսագետների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը, նպաստել ուսանող և երիտասարդ տնտեսագետների գիտակրթական մակարդակի բարձրացմանը, նրանց մասնագիտական աճին, աջակցել տաղանդաշատ ուսանող տնտեսագետների ուսումնառության կազմակերպմանը առաջատար կրթական հաստատություններում, ապահովել սկսնակ հետազոտողներին հետազոտություն իրականացնելու անհրաժեշտ պայմաններ, տնտեսագիտության ոլորտում ինքնուրույն կամ այլ անձանց միջոցով իրականացնել հետազոտություններ, աջակցել այլ անձանց կողմից նման հետազոտությունների իրականացմանը, աջակցել գիտական կոլեկտիվների կողմից առաջադեմ նախագծերի իրականացմանը, նպաստել տնտեսագիտության զարգացմանը, անհրաժեշտ օրենսդրության կատարելագործմանը, ապահովել տնտեսագետների և բիզնեսի ներկայացուցիչների միջև արդյունավետ համագործակցությանն ուղղված բարենպաստ պայմաններ, խթանել գիտական արդյունքների ներդրումը հանրապետության տնտեսության մեջ, շահույթ ստանալու նպատակով օգտագործել կամ կառավարել դրամագլուխը, բացառապես կանոնադրությամբ նախատեսված կարգով:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6, գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/2.

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 3 մարդ (2022թ.՝ 3 մարդ):

Գործարար միջավայր

Հիմնադրամն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են

Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի նշանակալի առևտրային գործընկեր է, ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, ինչպես նաև այդ պատժամիջոցների ուժգնացումը էական ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսական շուկայի վրա:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Այդ հանգամանքը նպաստել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքի աճին, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Հիմնադրամի գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 13-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 12	*Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)*

ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)*

Բացառությամբ սույն ծանոթագրության մեջ բացահայտված *Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ* ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ *Գործնական կիրառություն 2* ստանդարտների ստորև ներկայացված փոփոխությունների, այլ ստանդարտներն ու փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և *ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2*

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ *Գործնական կիրառություն* 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	**Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի**
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*

ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.5-ում, Հիմնադրամը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը՝ համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների: Բացահայտումները հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ ավելի պարզեցվել են և հստակեցվել՝ բացառելով ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում է ՖՀՄՍ-ների պահանջները:

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մեքենաների և սարքավորումների օգտակար ծառայության ժամկետները գնահատված են 3-6 տարի:

3.2 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա

հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

3.3 Վարձակալություններ

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Հիմնադրամի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Հիմնադրամը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը:

Մեկնարկի ամսաթվին Հիմնադրամը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները ներկայացվել են առանձին:

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում կամ ֆինանսական եկամուտում, բացառությամբ ավանդների արժեզրկման, որն արտացոլված է ակնկալվող կորուստների գծով ծախս/(եկամուտ) հոդվածում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 14.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղչման ազդեցությունը աննշան է, գեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները և ժամկետային ավանդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են բանկային ավանդները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով:

Պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են այլ կրեդիտորական պարտքերը և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 14.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են մեկնարկային ամսաթվի դրությամբ դեռ չվճարված վարձակալության վճարների ներկա արժեքով, որոնք գեղչվել են՝ օգտագործելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, կամ եթե այդ տոկոսադրույքը հնարավոր չէ պատրաստակամությամբ որոշվել, Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության վճարները ներառում են հաստատուն վճարումները:

Վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, երբ ապագա վարձակալության վճարների փոփոխություն է տեղի ունենում: Համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվել է զրոյի:

3.5 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Շնորհը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

3.6 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

3.7 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

3.8 Եկամուտ

Եկամուտներ շնորհներից և այլ նվիրատվություններից

Հիմնադրամի եկամուտները գոյանում են նվիրատվություններից, հանգանակություններից, հիմնադրի կողմից հատկացվող միջոցներից, ներդրումներից, ինչպես նաև շնորհներից:

Նվիրատվություններից և հանգանակություններից եկամուտը ճանաչվում է, երբ հավանական է, որ դրանք կստացվեն և եկամտի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնադրի կողմից հատկացվող միջոցները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դրանք դառնում են ստացման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ միջոցները տրամադրվում են որոշակի պայմաններով, կամ որպես դրամագլուխ, այս դեպքում ստացված միջոցները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված եկամուտը ճանաչվում է պարբերական հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական արժեք		
Տարեսկզբի մնացորդ	13,924	13,924
Վերաչափում	3,629	-
Տարեվերջի մնացորդ	17,553	13,924
Կուտակված մաշվածություն		
Տարեսկզբի մնացորդ	(5,570)	(2,785)
Մաշվածություն	(3,303)	(2,785)
Տարեվերջի մնացորդ	(8,873)	(5,570)
Հաշվեկշռային արժեք	8,680	8,354

Հիմնադրամը վարձակալում է գրասենյակային տարածք «Սթրատեջիք փրոփըրթի մենեջմենթ» ՓԲԸ-ից Երևան, Ամիրյան 4/2 հասցեով: 2023թ. կողմերի միջև կնքնվել է համաձայնագիր՝ վարձավճարի փոփոխության մասին: Հիմնադրամի ղեկավարությունը գնահատել է, որ գրասենյակային տարածքը կշարունակի վարձակալել մինչ 2025 թվականի վերջը:

5 Ավանդներ առևտրային բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք	3,700,905	3,488,812
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(34,421)	(31,776)
	3,666,484	3,457,036

Ամորտիզացված արժեքով չափվող բանկային ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը տարվա սկզբին	31,776	49,592
Կորուստների գծով պահուստների զուտ փոփոխություն	2,645	(17,816)
Մնացորդը տարվա վերջին	34,421	31,776

Ավանդները ներդրված են հայկական դրամով, 12-36 ամիս մարման ժամկետով, տարեկան 9.75%-10.8% միջին տոկոսադրույքով:

Տե՛ս ծանոթագրություն 15(ա) ավանդների գծով պարտաքային ռիսկի վերլուծության բացահայտման համար:

6 Հետաձգված եկամուտ

Հիմնադրամի հետաձգված եկամուտը գոյացել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից Հիմնադրամին հատկացվող միջոցների հաշվին (դրամագլուխ):

Հիմնադրամի կանոնադրության համաձայն, դրամագլուխը կարող է օգտագործվել միայն հետևյալ ուղղություններով.

- Գումար նվիրաբերել այնպիսի ֆոնդերում (endowment fund), որից ստացված եկամուտները կուղղվեն Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացմանը:
- Ներդնել միայն վերադարձման բարձր հուսալիություն ունեցող ֆինանսական ակտիվներում: Այդ ֆինանսական ակտիվները սահմանված են Հիմնադրամի կանոնադրությամբ:

7 Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալական պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	4,975	2,751
Ոչ ընթացիկ	5,094	6,496
	10,069	9,247

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 4-ում Հիմնադրամը վարձակալել է գրասենյակային տարածք «Սթրատեջիք փրոփերթի մենեջմենթ» ՓԲԸ-ից Երևան, Ամիրյան 4/2 հասցեով:

Ընդհանուր առմամբ վարձակալությունը պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Հիմնադրամը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Հիմնադրամին արգելված է հիմքում ընկած ակտիվը վաճառել կամ գրավադրել:

Վարձակալության մնացորդային ժամկետը 24 ամիս է:

Վարձակալության գծով պարտավորությունները գեղչելու նպատակով Հիմնադրամի կողմից կիրառված փոխառության միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 12.9%:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում վարձակալական պարատավորությունների գծով հաշվարկված տոկոսի ծախսը կազմել է 950 հազար դրամ (2022թ.՝ 1,134 հազար դրամ) և ներառվել է «ֆինանսական ծախսերի» մեջ:

Ապագա նվազագույն վարձավճարները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	5,882	3,600
Ֆինանսական ծախս	(907)	(849)
	4,975	2,751
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	5,430	7,200
Ֆինանսական ծախս	(336)	(704)
	5,094	6,496
Զուտ ներկա արժեք	10,069	9,247

8 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կրեդիտորական պարտքեր ծրագրային ծախսերի գծով	184	7,289
Պարտավորություններ աշխատակիցներին	323	936
Պարտավորություններ բյուջեին	240	995
	747	9,220

9 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	347,740	325,228
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	816	255
	348,556	325,483

10 Ծրագրային ծախսեր

Ծրագրային ծախսերը ներառում են Հիմնադրամի կողմից տրված նվիրատվությունները և շնորհները, ինչպես նաև ձեռքբերված ծառայությունները՝ Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	9,000	6,000
Երևանի պետական համալսարան	7,500	15,000
«Այլընտրանք հետազոտական կենտրոն» ՀԿ	6,000	12,000
Սլավոնական համալսարան	6,000	12,000
Ուսման վարձեր	4,245	3,901
«Տնտեսական հեռանկարների կենտրոն» հիմնադրամ	-	100,000
«ԱյՍիԷյչԴի Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ	-	24,300
«Հայ մշակութային և գիտական ընկերակցութիւն» հիմնադրամ	-	4,510
«Նոր Սերնդի դպրոց» ՀԿ	-	2,000
«Ստարտափ Արմենիա» ԳՀ	-	2,000
Այլ	8,071	20,658
	40,816	202,369

11 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մաշվածության ծախսեր	3,566	3,025
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	1,800	1,440
Այլ	2,182	2,460
	7,548	6,925

12 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	62,740	58,328
Հետաձգված հարկ	(645)	3,213
	62,095	61,541

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	279,106		113,737	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 20%)	50,239	18%	20,473	18%
Չնվազեցվող ծախսերի ազդեցությունը	11,856	4%	41,068	36%
Շահութահարկի գծով ծախս	62,095	22%	61,541	54%

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ավանդներ առևտրային բանկերում	5,720	476	6,196
Վարձակալության գծով պարտավորություններ	-	1,731	1,731
	5,720	2,207	7,927
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	1,562	1,562
	-	1,562	1,562
Զուտ դիրք	5,720	645	6,365

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ավանդներ առևտրային բանկերում	8,933	(3,213)	5,720
Զուտ դիրք	8,933	(3,213)	5,720

13 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

13.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է ղեկավարության կողմից վարձակալության ժամկետների գնահատման, ինչպես նաև լրացուցիչ փոխառության դրույքի վրա, որն օգտագործվել է վարձակալության վճարները զեղչելու համար: Վարձակալության ժամկետը գնահատելու ժամանակ ղեկավարությունը հաշվի է առնում այն բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք Հիմնադրամի համար վարձակալության երկարաձգման հնարավորությունը կիրառելու համար տնտեսական խթան են հանդիսանում, ինչպիսիք են վարձակալված վայրում գտնվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը, ինչպես նաև վարձակալության պայմանագրերը լուծելու և կնքելու ծախսերը: :

Այս գործոններում փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ գնահատված վարձակալության ժամկետների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների ներկայացված արժեքների վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկում

Հիմնադրամի ղեկավարությունը կիրառում է դատողություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը հաշվարկելու համար՝ օգտագործելով ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա: Տե՛ս ծանոթագրություն 15-ը՝ Հիմնադրամի կողմից պարտքային ռիսկի առավել մանրամասն բացահայտման համար:

14 Ֆինանսական գործիքներ

14.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինաննական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.4-ում:

14.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ավանդներ առևտրային բանկերում	3,666,484	3,457,036
Մնացորդներ բանկերում	36,477	36,362
	3,702,961	3,493,398

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	507	8,225
Վարձակալության գծով պարտավորություն	10,069	9,247
	10,576	17,472

15 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և ժամկետային ավանդները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընթացիկ հաշիվների մնացորդները պահվում են մի քանի բանկերում, որոնք ըստ S&P միջազգային վարկանշող կազմակերպության կողմից ունեն երկարաժամկետ ռիսկի B+ից - BB- վարկանիշ:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ավանդներ առևտրային բանկերում	3,666,484	3,457,036
Մնացորդներ բանկերում	36,477	36,362
	3,702,961	3,493,398

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Հիմնադրամը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Հիմնադրամը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն չի փոխվել, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստը ճանաչվում է ակտիվի 12-ամսյա պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչման պահի համեմատ էականորեն ավելացել է կամ առկա են ակտիվի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ, ապա պարտքային ռիսկից հնարավոր կորստի պահուստ ճանաչվում է տվյալ ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում պարտքային ռիսկից հնարավոր կորստի գումարի չափով:

Պարտքային ռիսկից հնարավոր կորստի հաշվարկում դրամական հոսքերի զեղչման նպատակով կիրառվում է ակտիվի սկզբնական ճանաչման պահին արդյունավետ տոկոսադրույքը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների կորստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	31,780	49,628
Տարվա ընթացքում պահուստի զուտ աճ/(նվազում)	2,645	(17,848)
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,425	31,780

Հիմնադրամի ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի մնացորդները ըստ ֆինանսական ակտիվի տեսակների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ավանդներ առևտրային բանկերում	34,421	31,776
Մնացորդներ բանկերում	4	4
	34,425	31,780

բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.

	Կրեդիտորական պարտքեր	Վարձակալության գծով պարտավորություն	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	*Անտոկոս*	*12.9%*	
Մինչև 6 ամիս	507	3,167	3,674
6 ամսից մինչև 1 տարի	-	2,715	2,715
1-5 տարի	-	5,430	5,430
	507	11,312	11,819

2022թ.

	Կրեդիտորական պարտքեր	Վարձակալության գծով պարտավորություն	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	*Անտոկոս*	*11%*	
Մինչև 6 ամիս	8,225	2,100	10,325
6 ամսից մինչև 1 տարի	-	1,800	1,800
1-5 տարի	-	7,200	7,200
	8,225	11,100	19,325

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և ժամկետային ավանդները: Հիմնադրամի դրամական միջոցները և ժամկետային ավանդները էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

16 Պայմանականություններ

16.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

17 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Հիմնադրամի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ

	Վարձակալության գծով պարտավորություններ
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	11,713
Դրամային հոսքերից	
Մարումներ	(3,600)
Ոչ դրամային հոսքերից	
Տոկոսի հաշվեգրում	1,134
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,247
Դրամային հոսքերից	
Մարումներ	(3,758)
Ոչ դրամային հոսքերից	
Պարտավորության հաշվեգրում	3,630
Տոկոսի հաշվեգրում	950
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,069

18 Կապակցված կողմեր

18.1 Վերահսկողություն

Հիմնադրամը ստեղծվել է 2010թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի N 1/1365Ա որոշմամբ: Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

18.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	12,453	13,281

Հազար դրամ Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Կրեդիտորական պարտքեր	294	343

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.06.2024 17:20